ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1 նոյեմբերի 2023թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-07

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), Արուսյակ Ջուլհակյանի, Արմինե Թումասյանի, Նինա Փիրումյանի, Արթուր Հովսեփյանի, Արմեն Ասատրյանի կազմով, 2023թ. նոյեմբերի 01-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդը իր՝ 03.10.2023թ. թիվ ՄԽ-Ո-02 որոշմամբ, սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Խորհուրդը ուսումնասիրեց հավակնորդ Խաչիկ Խոջայանի 25.10.2023թ. ներկայացրած հայտը: Հայտի ուսումնասիրության արդյունքում Խորհուրդը՝

Պ Ա Ր Զ Ե Տ

Համաձայն 03.10.2023թ. Խորհրդի որոշման՝ հավակնորդը պետք է ներկայացնի մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ ինքնակենսագրություն, առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի

պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) հավաստող փաստաթղթի պատճեններ և դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթղթեր:

Խ.Խոջայանի 25.10.2023թ. ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությամբ չի հաստատվել վերջինիս կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցրած լինելու փաստը, բացակայում էր հայալեզու ինքնակենսագրականը, ինչպես նաև չէր ներկայացվել դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին 30.05.2019թ. ՀՀ կառավարության 685-Ն որոշման 3-րդ հավելվածի 2.1-րդ և. 3-րդ կետերով սահմանված փաստաթղթերը նարկոլոգիական և հոգեկան հիվանդությունների բացակայության վերաբերյալ: Խորհուրդը, Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով, Խ.Խոջայանին ծանուցել է հիշյալ փաստաթղթերի բացակայության վերաբերյալ և առաջարկել մինչև սույն թվականի հոկտեմբերի 31-ը ամբողջականացնել և համապատասխանեցնել իր դիմումին կից ներկայացված փաստաթղթերը Խորհրդի 03.10.2023թ. թիվ ՄԽ-Ո-02 որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Խ.Խոջայանը սահմանված ժամկետում թերությունները չի վերացրել, որևէ փաստաթուղթ Խորհրդին չի ներկայացրել:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերը՝ Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավակնորդ Խաչիկ Խոջայանի հայտի ընդունումը մերժել:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ